ԿՈՍՏԱՆԴԻՆ
ԾԻՐԱՆԱԾԻՆ

ԿԱՄԱՎՆ ՔՐԻՍՏՈՍԻ՝ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐԻ ՀՌՈՄԱՅԵՑԻՆԵՐԻ ԿԱՅՍՐ ԿՈՍՏԱՆԴԻՆՆ ԻՐ ՈՐԴՈՒՆ՝ ԱՍՏՎԱԾԱՊԱԿՅԱԼ ԵՎ ՇԻՐԱՆԱՇԻՆ ՌՈՄԱՆՈՍ ԿԱՅՍԵՐ

[„ԿԱՅՍՐՍԻԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ“]

DE ADMINISTRANDO IMPERIO

ԳԼՈՒԽ 27[1]

ԼԱՆԳՈԲԱՐԴԻԱՅԻ ԲԱՆԱԿԱԹԵՄԻ, ՆՐԱ ՊՐԻՆԿԻՊԱՏՆԵՐԻ[2] ԵՎ ԱՐԽՈՆՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ[3] ՄԱՍԻՆ

Պետք է գիտենալ, որ անցյալում ամբողջ Իտալիան, այն Լ Նեապոլիսը, Կասլուան, Բենեվենտոսը, Սալերնոն, Ամալֆեն, Գայետեն, ողջ Լանգոբարգիան գտնվում էին հռոմայեցիների տիրապետության ներքո, երբ, հասկանալի է, Հռոմն էր նրանց մայրաքաղաքը։ Երբ մայրաքաղաքը տեղափոխվեց Կոստանդնուպոլիս և պետությունը բաժանվեց երկու մասի, Կոստանդնուսլոլսի կայսրը երկու պատրիկ էր ուղարկում, որոնցից մեկը իշխում էր Սիկիլիայի, Կալաբրիայի և Ամալֆեի վրա, իսկ մյուսը՝ նստում էր Բենեվենտոսում. վերջինիս տիրապետության տակ էին Պապիան, Կապուան և մնացած բոլորը։ Ամեն տարի նրանք որոշակի հարկ էին վճարում կայսեր։ Վերոհիշյալ բոլոր շրջաններում հռոմայեցիներ էին բնակվում։ Իրենե կայսրուհու ժամանակ ուղարկված պատրիկ Նարսեսը տիրում էր Բենեվենտոնում և Պապիայում, իսկ Հռոմը գտնվում էր պապ Զաքարիա Աթենացու ձեռքում[4]։ Պապիայի կողմերում պատերազմներ եղան, Նարսեսը պետական հարկերը ծախսելով զորքի վրա, ընդունված կարգի համաձայն հավաքված հարկերը՝ [Կոստանդնուպոլիս]* չուղարկեց։ [Մայրաքաղաքից ստացված նամակին] Նարսեսը պատասխանեց, թե այստեղից հավաքածս գրամից հազիվ թե կարողանամ ուղարկել, քանզի ամբողջ գրամը ծախսեցի պատերազմների վրա և զուր եք դուք գրամ ակնկալում։ Իրենե կայսրուհին, լսելով այդ, զայրացավ և նրան իլիկ ու ճախարակ ուղարկեց, գրելով, թե «առ սրանք, քեզ դա՛ է վայել։ Մենք գտանք, որ քեզ ավելի է պատշաճում մանել, քան թե տղամարդու պես զենքով պաշտպանել հռոմայեցիների [շահերը]»։ Պատրիկ Նարսեսը լսելով այդ, պատասխա-

* ( ) Կոր փակագծերի մեջ առնված բառերը հեղինակինն են։ [ ] Անկյունավոր փակագծերի մեջ առնված բառերը թարգմանչինն են։

նեց կայսրուհուն. «Դուք գտնում եք, որ [ինձ] ավելի վայել է կնոջ նման մանել և ոլորել։ Բայց ես բացի իլիկից ու ճախարակից այնքան բուրգ տամ, որ հռոմայեցիները մինչև իրենց կյանքի վերջը չկարողանան մանել»։ Լանգոբարգներն այն ժամանակ Պանոնիայում էին ապրում, որտեղ այժմ Թուրքերն են բնակվում՝։ Պատրիկ Նարսեսը ամեն տեսակի մրգեր ուղարկեց նրանց և հայտնեց. «Եկեք այստեղ և տեսեք մի երկիր, որտեղ, ինչպես ասում են, մեղր ու կաթ է ծորում, որից լավը, իմ կարծիքով, աստված չի տվել։ Եթե ձեզ այն դուր գա, բնակվեք այնտեղ և ինձ գարե դար երանի կտաք»։ Լանգոբարգները, լսելով այդ, հավատք ընծայեցին նրա խոսքերին և իրենց ընտանիքներով եկան Բենեվենտոս, ...նենգությամբ գրավեցին բերդը, իսկ բոլոր բնակիչներին կոտորեցին[6]։ ...Նրանք այնուհետև արշավանք գործելով, իրենց ենթարկեցին ողջ երկիրը՝ Լանգոբարգիայի և Կալաբրիայի բանակաթեմը մինչև Պապիա...

ԳԼՈՒԽ 43

ՏԱՐՈՆ ԵՐԿՐԻ ՄԱՍԻՆ[1]

Հյուսիսում ապրող սկյութների մասին քեզ, ցանկալի որդյակ, բավարար չափով ասվել է[2]։ Այդ մասին գիտենալը քեզ համար ապագայում անպայման օգտակար և պիտանի կլինի։ Բայց քեզ անհրաժեշտ է իմանալ նաև արևելքում գտնվող և նորից հռոմայեցիների տիրապետության տակ անցած [երկրների] մասին, երկրներ, որոնք անցյալում դուրս էին եկել [հռոմայեցիների] հպատակությունից։

Հռոմայեցիների կայսրին առաջինը ենթարկվեց և հպատակվեց Տարոնի իշխան Կրիկորիկը[3]։ Բայց հենց սկզբից նա երկուլարի վրա էր խաղում, խոսքով ձևացնում էր, թե գնահատում է կայսեր բարեկամությունը, բայց իրականում աշխատում էր հաճոյանալ սարակինոսների առաջնորդին։ Տարբեր ժամանակներում նա Ասորիքից դուրս եկող և հռոմայեցիների կայսեր ենթակա բանակաթեմերի վրա արշավող [սարակինոսների] զորքերին ճանապարհ էր ցույց տալիս, ինչպես նաև Ասորիքին էր հայտնում հակառակորդ սարակինոսների դեմ հռոմայեցիների գաղտնի ծրագրերը։ Նա շարունակ թաքուն նամակներ էր ուղարկում ամերմում-